

ՀԱՅ ԳԱՂԹԱՎԱՅՐԵՐԻ ԵՒ ԱՐԵՒԵԼՔԻ
ԵՐԿՐՆԵՐԻ ՀԱՆԴԵՊ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹԵԱՆ ԽՆԴԻՐԸ
1920Ի ՎԵՐՁ-1921Ի ՍԿՁԲԻՆ

ՀԱՄՕ ՍՈՒՔԻԱՍԵԱՆ

Դեռևս միջնադարում Եւրոպայի եւ Ասիայի տարբեր պետութիւններում ստեղծուել էին հայկական գաղթավայրեր: 1890ականներին համիդեան ջարդերի, 1909ի Կիլիկիայի հայկական բնակչութեան կոտորածի եւ առանձնապէս Ա. Համաշխարհային Պատերազմի տարիներին երիտթուրքերի կողմից իրագործուած Յեղասպանութեան հետեւանքով հարիւր-հազարաւոր հայեր բռնագաղթուեցին իրենց բնօրրանից եւ համալրեցին տարբեր գաղթավայրերում բնակուող հայութեան շարքերը, կամ ստեղծեցին նոր գաղթավայրեր: Հայաստանի Ա. Հանրապետութեան օրօք պետութիւնը կարեւոր ուղադրութիւն էր դարձնում երկրում կուտակուած գաղթականութեան հիմնախնդրին, ինչպէս նաեւ մօտիկ եւ հեռաւոր պետութիւնների հայ գաղթավայրերի հետ անհրաժեշտ կապերի հաստատմանը: Այս քաղաքականութեան արդիւնքում արդէն 1920 Օգոստոսի 27ին ՀՀ կառավարութիւնը որոշում է կայացնում Արտաքին Գործերի Նախարարութեան կազմում Գաղութային Բաժին հիմնելու մասին: Որոշման մէջ շեշտուում է, որ Բաժինը ստեղծուում էր հայկական գաղութների վիճակն ուսումնասիրելու, նրանց Մայր Հայրենիքին կապելու եւ գաղութահայերի նիւթական ու բարոյական ուժերն ի շահ Հայաստանի օգտագործելու նպատակով: Այս կարեւոր ստորաբաժանման ղեկավարը (բաժնի վարիչը) Ներսէս Բաբայեանն էր, որն իր պաշտօնը ստանձնել էր Սեպտեմբերի 10ին¹:

1920 Դեկտեմբերի 2ին Հայաստանում հաստատուեց խորհրդային վարչակարգ: Հայաստանի խորհրդայնացմանը յաջորդող օրերին Հայաստանի Սոցիալիստական Խորհրդային Հանրապետութեան (ՀՍԽՀ) գերագոյն իշխանութիւնը կրող մարմինը՝ Հայաստանի Յեղափոխական Կոմիտէն (Յեղկոմ), ձեռնամուխ եղաւ նախկին պետական կառավարման մարմինների վերակառուցման: 1920 Դեկտեմբերի 10ին ՀՀ Արտգործնախարարութեան կառուցի հիման վրայ կազմաւորուած ՀՍԽՀ Արտաքին Գործերի Ժողովրդական Կոմիսարիատն ամբողջութեամբ չափհեց գոյութիւն ունեցող կառույցը եւ անձնակազմը: Լուծարման ենթարկուեց Գաղութային Բաժինը, իսկ Բաբայեանն այլ աշխատանքի ուղարկուեց²:

Ներկայացուող հրապարակումը Խորհրդային Հայաստանի ղեկավարութեան համար Մովսէս Պետրոսեանի³ հեղինակած 3 ընդարձակ վաւերագրերն են, որոնք հրապարակուում են առաջին անգամ:

Չնայած ՀՀ Արտգործնախարարութեան Գաղութային Բաժնի լուծարմանը՝ Խորհրդային Հայաստանի իշխանութիւնները կարեւորում էին հայկական գաղթավայրերը: Այսպէս, խորհրդայնացումից օրեր անց՝ 1920 Դեկտեմբերի 13ին, «Արտասահմանեան Գաղութներ» խորագրով զեկուցագիր է պատրաստուել: Պետրոսեանի հեղինակած նշեալ զեկուցագրում մանրամասն անդրա-

դարձ էր կատարուում հայկական գաղթավայրերի դրուժեանը, Հայկական Հարցի առնչութեամբ գաղթավայրերում տիրող մտայնութեանը եւ գաղութանայ կազմակերպութիւններին: Հեղինակը կարեւոր խնդիր էր համարում արտասահմանի հայութեանը ներկայացնել խորհրդայնացման օգտակարութիւնը՝ Հայաստանի յետագայ զարգացման տեսակէտից: Նա ՀՍԽՀ ղեկավարութեանն առաջարկում էր գաղթավայրերն օգտագործել քաղաքական եւ նրկատնտեսական առումներով օգուտներ ստանալու համար:

1921ին Մոսկուայում քեմալական թուրքիայի հետ կայանալիք խորհրդատողովին մեկնող հայկական պատուիրակութիւնը (Արտգործոցոցոց Ալեքսանդրը Բէկզադեանի գլխաւորութեամբ) իր հետ վերցրեց նաեւ այս գեկուցագիրը: Փաստաթղթի արխիւային օրինակներէց մէկի վրայ ՀՍԽՀ պատուիրակութեան քարտուղար Վահագն Մուրադեանը 1921 Յունուարի 27ին (Թիֆլիսից Բաքու ճանապարհուելիս) ուուերէնով մակագրել է. «թարգմանել ոուսերէն»⁴:

Արդէն մէկ տասնօրեակ անց՝ 1920 Դեկտեմբերի 23ին, Պետրոսեանի պատրաստած «Խորհրդային Հայաստանի Արեւելքի Քաղաքականութեան Մասին» վերնագրուած գեկուցագրում առաջարկներ են ներկայացուում խորհրդային հանրապետութիւնների արեւելեան քաղաքականութեան մէջ Խորհրդային Հայաստանի ունենալիք դերակատարութեան վերաբերեալ եւ հիմնաւորում ՀՍԽՀ Արտգործոցոցոցով կազմում Արեւելքի Բաժին ստեղծելու անհրաժեշտութիւնը: Զեկուցագրի վերջին մասում անդրադարձ է կատարում հայկական գաղթավայրերին եւ նրանց հետ կապ պահելու խնդրին:

Բէկզադեանի պատուիրակութիւնն իր հետ Մոսկուա տարաւ նաեւ այս գեկուցագիրը: Փաստաթղթի՝ 1921 Փետրուարի 18ով թուագրուող ուուերէն թարգմանութիւնը վաւերացուած է պատուիրակութեան քարտուղար Վ. Մուրադեանի կողմից⁵: Զեկուցագիրը Մոսկուա տանելով՝ ՀՍԽՀ պատուիրակութիւնը հաւանաբար յոյսեր էր փայփայում թուրքիայի հետ խորհրդային կողմի յարաբերութիւններում Հայաստանի դերի բարձրացման վերաբերեալ: Սակայն Մոսկուա ժամանելու յաջորդ օրերին հայ պատուիրակներին ակնյայտ դարձաւ իրենց յոյսերի անհեռանկարութիւնը: Այս գեկուցագրից շատ շանցած՝ արդէն 1921 Յունուարի 5ին, նրա հեղինակ Պետրոսեանին տեսնում ենք ՀՍԽՀ Արտգործոցոցովմատի նորաստեղծ Արեւելեան Բաժնի վարչի պաշտօնում⁶: Սակայն շատ շուտ այն վերանուանուել է «Տեղեկատու եւ Արեւելեան Բաժին», իսկ այնուհետեւ՝ «Տեղեկատու Բաժին»:

Հայկական գաղթավայրերի հանդէպ Խորհրդային Հայաստանի իշխանութիւնների կողմից գործնական քաղաքականութիւն վարելուն էր ուղղուած Պետրոսեանի հեղինակած յաջորդ վաւերագիրը: Այն ՀՍԽՀ Արտգործոցոցովմատի «Տեղեկատու Բաժին»ի կանոնադրութեան նախագիծ էր, որի համաձայն նախատեսուող բաժինն ունենալու էր 3 ենթաբաժին՝ ընդհանուր տեղեկատուութեան, արեւելեան երկրների, արտասահմանեան հայ գաղութների:

Արտասահմանեան հայ գաղութների ենթաբաժինը պէտք է յարաբերութիւններ հաստատէր հայկական գաղթավայրերի հետ, նրանց տեղեկութիւններ փոխանցէր Խորհրդային Հայաստանի վերաբերեալ, վերլուծութիւններ պատրաստէր գաղթավայրերի մասին, զբաղուէր ներգաղթի խնդիրների կանոնակարգմամբ եւ այլ հարցերով: Սակայն ներկայացուած նախագիծն ամբողջութեամբ կեանքի չկոչուեց: Պետրոսեանի ղեկավարութեամբ գործող Տե-

ղեկատու Բաժինը 1921 Յունուար-Փետրուարին հիմնականում զբաղւում էր իշխանութիւնների համար տեղեկատուութիւններ, մամուլի տեսութիւններ պատրաստելով: Փետրուարեան Ապստամբութեան նախօրէին՝ 1921 Փետրուարի 15ի գիշերը, ՀՍԽՀ Արտակարգ Յանձնաժողովի (չեկա) կողմից ձերբակալւում է Պետրոսեանը եւ բանտից ազատւում Փետրուարի 18ին տեղի ունեցած իշխանափոխութեան հետեւանքով: Նա պաշտօնավարել է Հայրենիքի Փրկութեան Կոմիտէի Արտգործնախարարութիւնում՝ որպէս Տեղեկատու Բաժնի վարիչ, իսկ Ապրիլին մեկնել Պարսկաստան: ՀՅԴի վարած քաղաքական գծին համաձայն չլինելու պատճառաբանութեամբ՝ 1921ի ամռանը հեռացել է կուսակցութիւնից⁷:

Փետրուարեան Ապստամբութեան հետեւանքով ինչպէս ՀՍԽՀ իշխանութիւնների շատ ծրագրեր, այնպէս էլ գաղթավայրերի հանդէպ որդեգրուելիք քաղաքականութեան հարցը մնաց զուտ թղթի վրայ: Կեանքի չկոչուեցին այս առաջարկ-նախագծերը: Սակայն յետոյ էլ մոռացութեան չմատնուեցին: 1921ին Փետրուարեան Ապստամբութեան ակարտից յետոյ կրկին մէջտեղ եկաւ Պետրոսեանի կողմից պատրաստուած Տեղեկատու Բաժնի նախագիծը: Այն որոշակի լրացումներից ու խմբագրումից յետոյ 1922 Օգոստոսի 2ին ՀՍԽՀ Ժողովրդական Կոմիտարների Խորհրդի Նախագահ Սարգիս Լուկաշինի կողմից հաստատուեց իբրեւ Ժողկոմխորհի Տեղեկատու Բաժնի կանոնադրութիւն⁸: Իսկ գաղթավայրերի հանդէպ բոլշեւիկեան քաղաքականութեան վերջնական ձեւաւորումը տեղի ունեցաւ Լոզանի Խորհրդաժողովին (1922-1923) յաջորդող շրջանում:

Հրատարակուող 3 փաստաթղթերը պահւում են Հայաստանի Ազգային Արխիւի (ՀԱԱ) թիւ 114 Ֆոնդում (ՀՍԽՀ Արտաքին Գործերի Կոմիտարիատ): Հրապարակման ընթացքում փաստաթղթերի իմաստային եւ լեզուաբանական առանձնայատկութիւնները պահպանուել են բնագրային տեսքով, կատարուել են միայն կէտագրական եւ ուղղագրական մասնակի շտկումներ եւ որոշ ծանօթագրութիւններ:

1.⁹

«ԱՐՏԱՍԱՀՄԱՆԵԱՆ ԳԱՂՈՒԹՆԵՐ»

13 Դեկտեմբերի 1920թ.

Երեւան

Արտասահմանեան Գաղութներ, Գաղութներու Քաղաքական Մտայնութիւնը Հայկական Հարցի Վերաբերմամբ

Համաերոպական պատերազմի զինադադարից անմիջապէս վերջ արտասահմանի բազմամարդ հայ գաղութներու մէջ տարերայնօրէն յառաջ եկաւ ահագին ոգեւորութիւն: Ոգեւորուեց բուն հայ պուրժուազիան, հայ վաճառականը, հայ արդիւնաբերողը, ոգեւորուեցին նաեւ բոլոր անոնք, որոնք իրենց կեանքի ընթացքին ո՛չ հայկական հարցով էին հետաքրքրուած, ո՛չ այդ հարցին ռեւէ կերպով նպաստած: Նրանց առջեւ բացուեցան ընդարձակ հեռանկարներ օգտագործելու Հայաստանի, մեծ Հայաստանի հանքերը եւ բոլոր հարստութիւնները, մանաւանդ Կիլիկիայի: Ոչ մէկ ժամանակ արտասահմանի հայ քաղաքական բոլոր հոսանքները, առանց բացառութեան, այնքան ռոմանթիք չէին եղած, որքան զինադադարից յետոյ: Առանց նկատի առնելու,

որ պետութիւն մը կազմելու հիմնական տարրերէն մէկն է ազգաբնակչութիւնը, որ դժբաղտաբար ջարդուած էր, բոլորը կը պահանջէին Հայաստան ծով ծով. Սեւ եւ Միջերկրական ծովերով, անպատճառ Կիլիկիայով: Այդ ծրագիրը գաղտնի կերպով ջատագովողներն էին Անգլիան եւ Ամերիկան՝ յանձին ռոմանթիք Ուիլսոնի¹⁰: Փրկելու համար Կիլիկիան Ֆրանսայի ճիրաններէն, Անգլիան գաղտնի կերպով Փարիզի ազգային կոչուած համագումարի ընթացքին թելադրած է պինդ կաշէլ Կիլիկիային: Անգլիայէն սիրտ առած, այնտեղ հաւաքուած հայ «դիւանագէտները» համարձակած էին նոյն իսկ Փարիզի մէջ կազմակերպել մեծ միտինկ եւ ցոյցի ձեռով պահանջել Կիլիկիան: Մեծ Հայաստանի գաղափարին ամենամեծ եւ եռանդուն պաշտպանն էր Պօղոս փաշան¹¹՝ հայ պուրժուազիային կուռքը, որուն միացած էր Ահարոնեանը¹². հակառակ անոր, որ ունեցած էր Հայաստանի Խորհուրդէն մանտաթ¹³ պահանջելու ատելի համեստ սահմաններով Հայաստան:

Անցաւ մեղրամիսի շրջանը եւ, շնորհիւ եւրոպական քափիթալիսթական պետութիւններու քաղաքական եւ տնտեսական շահերու դասատրման, որ հաշուի պիտի առնէր անխուսափելիօրէն ռեալ ուժերու փոխյարաբերութիւնը, Մեծ Հայաստանէն մնաց Սեւրի Հայաստանը՝ իր անորոշ սահմաններով, սակայն հակառակ այդ բոլորին դեռ եւս արտասահմանեան քաղաքական կուսակցութիւնները չի դադրեցան մրցելէ իրարու հետ: Խեղճ Կիլիկիայի հարցը դարձաւ ծիծաղելի. Սիիուն եւ Ճիիուն գետերուն մէջ, երէք տեղ տարբեր կուսակցութիւններու միջոցով յայտարարելով անկախութիւն¹⁴: Հակառակ անոր, որ Սեւրի դաշնագրով հայկական երկու հատուածները իրաւականօրէն միացած պէտք էին համարուել, սակայն հայ պուրժուազիան յանձին Պօղոս Նուպարի երկու ամիս առաջ կը պահանջէր մանտաթ գաղութներէն՝ զբաղուելու համար «չազատագրուած Հայաստանի եւ Կիլիկիայի» հարցով, ծառայելու համար իբրեւ գործիք եւրոպական քափիթալիզմի յետին նպատակներուն, յամառելով ներկայանալ միակ ներկայացուցիչը բազմաշարժար թրքահայ դատին, առանց ունենալու իր ետեւը թրքահայ մասսան, որ փաստօրէն ցան ու ցրի է եկած Հայաստանի, Վրաստանի, Հիւսիսային Կովկասի, Ատրպէյճանի եւ Ռուսաստանի մէջ եւ որ տեղեկութիւն չունի իր անունով եղած քաղաքական քոմպիւնացիաներէն¹⁵, առանց նոյն իսկ ունենալու գաղութներու հայկական մասսաները, որոնք բոլորովին երես էին դարձուցած վերջերս պուրժուազիայի այդ կուռքէն, պոյքոթի ենթարկելով անոր հրաւիրած Երկրորդ Փարիզի Ազգ[ային] Համագումարը¹⁶, որուն մասնակցած էին Հայկական Դատին հետ ոչ մէկ առնչութիւն չունեցող մէկ քանի ազնուական խաներ, պէկեր եւ էֆենտիներ, ասկից անկից նշանակովի ուղարկուած եւ մէկ քանի անհատ դաշնակցական մտաւորականներ:

Գաղութներու ողջամիտ հայոց համար գաղտնիք չէ, որ Հայաստանի Հանրապետութեան, Ատրպէյճանի եւ Վրաստանի շարքին de facto ճանաչուած եղաւ ճիշտ այն ժամանակ, երբ պոլշեիկեան Ռուսաստանը կը մօտենար Հիւսիս[ային] Կովկասին եւ եղան միայն այն նպատակով, որ այդ պետութիւնները ծառայեն իբրեւ պատմէշ Ռուսաստանի դէմ¹⁷, եւ այն ժամանակ, երբ Հայաստան կնքեց զինադադար Խ[որհրդային] Ռուսաստանի հետ¹⁸ զիջելով անոր դէպի Պարսկաստան տանող ճանապարհները, Հայաստանը դադրեցաւ համարուել իբրեւ պահակ Անգլիայի եւ յառաջ եկաւ բեկում անոր քաղաքականութեան մէջ ի վնաս Հայաստանի: Իրականութիւնը այսպէս ըմ-

քննող, այս ուղղութեամբ խօսող եւ գրող մտատրականներ չէին պակսեր արտասահմանի մէջ: Մայիսեան դէպքերէն¹⁹ յետոյ, երբ շատ էր տարածուած արտասահման, որ Հայաստան դարձած է սովեթական, ամէնէն պահպանողական ուղղութեան հետեւող «Ժամանակ» թերթը (Պոլիս) գրած էր խմբագրական մը, ուր դառնութեամբ խօսելով Անթանթայի քաղաքականութեան դէմ, կը պաշտպանէր այն տեսակետը, որ ուրիշ ելք չունէր Հայաստան, բացի սովեթական դառնալուց: Այդ թիւը քննֆիսքացիայի²⁰ ենթարկուեցաւ, եւ թերթը փակուեցաւ²¹:

Ես կը յիշեմ այն մեծ խանդավառութիւնը, որ յառաջ բերած էր Լենինի առաջին դէկրէտը Հայաստանի անկախութեան ճանաչման մասին²²՝ հայ մասսաների մէջ արտասահմանում:

Շնորհիւ Անգլիայի բացայայտ քաղաքականութեան, Հայաստանի այս մեծ դժբաղտութենէն վերջ, եթէ Խորհրդային Հայաստանը յաջողի թրքահայ դատը, որ խղճի հարց մըն է, գէթ մասամբ լուծել, միացնելով Տաճկահայաստանի մէկ մասը եւ տեղադրելով Ռուսաստանի, Հիւս. Կովկասի, Վրաստանի եւ Ատրպէյճանի մէջ ցան ու ցրիւ եկած բազմաթիւ անտուն անտէր թշուառ տաճկահայերը, ոչ միայն կը շահի նաեւ համակրութիւնը ամբողջ արտասահմանի հայ ժողովրդին, խանդավառութիւն յառաջ բերելով անոր մէջ, աւելի լայնօրէն կը շահի նաեւ Եւրոպայի եւ Ամերիկայի բովանդակ աշխատատու մասսաների համակրութիւնը:

Յատկանշական է այն բերանացի յայտարարութիւնը, որ Հայաստանի անգլիական ներկայացուցիչը ըրաւ նախկին կառավարութեան՝ Կարսի անկումէն յետոյ, թէ ինք իբր թէ խօսած է տաճկահայերու հետ եւ լսած է, թէ անոնք կը ճանչնան միայն Պօղոս Նուպարը իբրեւ իրենց ներկայացուցիչ ու այդ իմաստով ալ հեռագրած է: Այս ողբերգութենէն վերջ ալ երեւի դեռ անգլիական կառավարութիւնը նպատակ ունի իբրեւ ըզբերվ²³, տաճկահայ դատը դիւանագիտական խաղերու առարկայ դարձնելու:

Գաղութային Կազմակերպութիւններ Եւ Անոնց Գործունէութիւնը

Հայաստանի Հանրապետութեան կազմակերպումէն առաջ Հայաստանի սահմաններէն դուրս քաղաքական նպատակով գործող յեղափոխական-դաւադական կազմակերպութիւններու գոյութիւնը հասկանալի էր, բայց վերջերս Հայաստանի համար քաղաքական իմաստով խորհող եւ գործող արտասահմանեան կուսակցութիւնները կարծէք թէ դարձած են անախորհիւմ²⁴: Դասական գաղութը՝ անիմաստ քաղաքական վեճեր Հայաստանի շուրջ, ամերիկահայ գաղութն է, ուր բնաւ այս երկրին հետ կապ չունեցող կուսակցութիւններ եւս, ինչպէս Ռամկավար, Վերակազմեալ, Ս. Դ. Հնչակեան, Դաշնակցականներու կարգին կը մղեն իրարու դէմ յարատեւ էքսթրիմիզմի²⁵ պայքար, առանց կապելու այդ պայքարը իրենց հետեւորդներու դասակարգային շահերուն հետ նոյն երկրին մէջ: Կտրուած իրենց հայրենիքէն, աշխատատուներ միշտ կ'երագեն լաւ օրեր իրենց հայրենիքի համար եւ, բաղձալով վերադառնալ իրենց տները, միշտ կու տան առատածեռնօրէն իրենց աշխատավարձէն աւելցած գումարները հայ տարագիրներու, որբերու բանակին համար եւ այդ գումարները կը հասնին միլիոններու: Նոյն եռանդով այս վերջին երկու տարին զոհաբերութիւններ կ'ընեն եգիպտահայ, պուլկարահայ, ռումանահայ հոծ գաղութները օրինակելի մրցակցութեամբ: Օրինակելի գա-

դուրս այդ տեսակետով պուլկարահայ գաղութն է, որ ունի Ազգ[ային] Խորհուրդ՝ ընտրուած ընդհանուր, հաւասար, գաղտնի եւ համեմատական սիսթեմով կազմուած համագումարէ մը: Այդ համագումարը դրած է ամէն մէկ հայու վրայ առաջատուական ազգային տուրք, որ կը բաշխուի հետեւեալ ձեւով.

- 50% հայկական բանակին
- 20% որբերուն եւ տարագիրներուն
- 15% ինքնապաշտպանութեան
- 10% ներգաղթի
- 5% կարմիր խաչի

Այս կազմակերպութիւնը 1918թ. Դեկտեմբերէն մինչեւ 1920թ. Փետրուար ունեցած է 1 1/2 միլիոն լեւա (պոլիտական ֆրանք) ել եւ մուտք:

Նոյնպիսի կազմակերպութիւն ունի նաեւ ռումանահայ գաղութը: Պոլսոյ մէջ նոյնպէս բանակի մասնախումբ մը կազմուած է եւ մեծ քանակութեամբ նուէրներ ապրանքով ուղարկած է այստեղ: Պոլիս, Ամերիկա, Պուլկարիա, Ռումանիա, Եգիպտոս այս բոլորիս կան արտասահմանեան վալութայով²⁶ մեծ գումարներ զանազան գաղութային խորհուրդներու եւ այլ մարմիններու մօտ, գլխաւորաբար հաւաքուած ի նպաստ բանակին, որբերու, ներգաղթի եւ այլն: Անոնց մանրամասն հաշիւները դժբաղտաբար չունենք ձեռքի տակ, որովհետեւ դեռ նոր ձեռնարկուած էր գաղութային այդ գործունէութիւնը սիսթեմի վերածել, մշակելով միօրինակ նախագիծ-կանոնագիր Հ. Հ. օժանդակող միութիւններու, որոնք պիտի գործէին Հ. Հ. դիւանագիտական ներկայացուցիչներու եւ հիւպատոսներու հսկողութեան տակ: Այս նախագիծերը եւ հրահանգները, որոնց օրինակները ներփակուած են այստեղ, արդէն ուղարկուած են:

Այժմ, երբ Հայաստանը հռչակուած է խորհրդային, կարող է պատահել, որ զանազան délégationներ այդ գումարները ապօրինի կերպով գործածեն այլ նպատակներու համար:

Այդ գումարները հաւաքուած են գլխաւորաբար արտասահմանի հայ աշխատատեղներու նուէրներով, որ արդիւնք է անոնց արիւն քրտինքին, Հայաստանի մէջ ապրող հայ աշխատատեղութեան, հայ բանակին համար, որ այժմ իբրեւ Կարմիր Բանակ պիտի ծառայէ նոյն ժողովրդի ինքնապաշտպանութեան:

Հայաստանը այժմ կտրուած է արտաքին աշխարհէն, բայց պէտք է գտնել ճանապարհներ եւ միջոցներ պարզաբանելու համար արտասահմանի հայ աշխատատեղութեան այն յեղաշրջումը, որ կատարուեցաւ այստեղ, այդ յեղաշրջման օգտակարութիւնը եւ ընել կարելիին թոյլ չի տալու համար, որ մեր գաղութները մոլորուին զանազան “դիւանագէտներու”, հայ փաշաներու եւ պէկերու կողմէ եւ դառնան օպիէկտը²⁷ Անթանթայի դիւանագիտական նոր խաղերու: Միւս կողմէ պէտք է միջոցներ ձեռք առնել փրկելու եւ օգտագործելու արտասահմանեան գումարները՝ կրկին Հայաստանի համար գտնելով նոր ձեւեր, որպէսզի արգելք չի յարուցուի Անթանթայի պատկանող պետութիւններու կողմէ:

Ա. Գ. Նախարարութեան նախկին ժամանակաւոր վարիչ Մ. Պետրոսեան

ՉԵԿՈՒՑՈՒՄ
ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՐԵՒԵԼՔԻ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹԵԱՆ
ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետութիւնը Խորհրդային հռչակուելուց յետոյ նա, իբրեւ դաշնակից Ռուսաստանի ընկերային յեղափոխական մեծ շարժման, պիտի կատարէ իր կողմից ասանկարտի²⁹ դերը յետամնաց Արեւելքի մէջ, տարածելու համար յեղափոխական սերմերը Արեւելքի տառապող աշխատատու ժողովուրդներու մէջ եւ ստեղծելու Արեւելեան ազգերու մի նոր ֆեդերացիա, որ Անդրկովկասեան Ֆեդերացիայի հետ միասին պիտի կապուի յեղափոխական Խորհրդային Ռուսաստանին: Հայաստանը պիտի դառնայ միջնորդը Ռուսաստանի Արեւելեան քաղաքականութեան, որ հետզհետէ զուտ քաղաքական նպատակներէ զատ, պիտի հետապնդէ եւ ընկերային նպատակներ Արեւելքում: Այժմ այս քաղաքականութիւնը ձեռնտու է ամէնից աւելի հայ աշխատատուութեան, որովհետեւ անոր խաղաղ զարգացման նախապայմանն է վերջակէտ դնել այն ազգամիջեան կռիւներուն, որոնք սպառած են անոր կենսունակ ուժերը, իսկ այդ կռիւներուն վերջ կը տրուի ոչ միայն Անդրկովկասեան Ֆեդերացիայի ստեղծումով, այլ նաեւ Արեւելեան Ֆեդերացիայի կազմակերպումով: Այդ գործը լաւ պայմաններու մէջ դնելու եւ դեկավարելու համար բնական է, որ Խորհրդային Հայաստանի Արտաքին Գործերի Կոմիսարիատը կ'ունենայ իր առանձին բաժինը՝ Отдел Востока (otdel vostoka՝ արեւելքի բաժին – Հ.Ս.), որը կը տանի իր աշխատանքները համախորհուրդ Խորհրդային Ռուսաստանի եւ Ազրբեյջանի Արտաքին Գործերի Կոմիսարիատների համապատասխան բաժինների հետ:

Յոյց տալէ առաջ այն միջոցները, որոնց պիտի դիմէ Խորհրդային Հայաստանի Արտաքին Գործերի Կոմիսարիատը, եւ պիտի փորձեն մի թռուցիկ ակնարկով վերլուծել այդ քաղաքականութեան անմիջական օպիէկտը եղող Տաճկաստանի քաղաքական, տնտեսական դրութիւնը եւ դասակարգերի փոխյարաբերութիւնները Համիտի տապալումից վերջ մինչեւ վերջին շրջանը:

Սուրբան Համիտի բռնակալութեան շրջանին Տաճկաստանի մէջ տիրապետող ոյժն էր Համիտի քամարիլան³⁰, ուր կը մասնակցէին ֆետալական եւ կղերական դասակարգերի արտայայտիչներ: Համիտի օրով քայքայում էր պետական օրգանիզմը, իսկ այդ քայքայումից վնասուողներն էին, ի շարքս ուրիշ ճնշող ժողովուրդների, նաեւ թուրք աշխատատուութիւնը, որ թնդանօթի միս էր անվերջ պատերազմների եւ բռնկումների դէմ, բայց որ շնորհիւ իր յետամնացութեան եւ դասակարգային անգիտակցութեան յամրօրէն տանում էր իր տառապանքը եւ ընդունակ չէր ըմբոստանալու: Աւելի շեշտուած կերպով այդ սիսթէմի հետեւանքները զգացողները զինուորական եւ քիւրդկատական տարրերն էին, որոնք չէին ստանում կանոնաւոր ռոճիկ, ունէին անկայուն դիրք եւ մի գեղեցիկ օր իբրեւ անպէտք փախաս դուրս շարտուելու եւ սոված մնալու հեռանկար: Այդ դասերի վրայ էր յենում Իֆիհատի³¹ շարժումը: Ռեւալի³² տեսակցութիւնից յետոյ, երբ Թուրքիան նոր անդամահատութեան վտանգի էր ենթակայ, թուրք զինուորական դասը դուրս եկաւ յանձնին[ս]

Էնվերի եւ Նիագիի եւ կատարուեց յեղաշրջում, որ յեղափոխական շարժում չէր, այլ պարզ Pronunciamento³³:

Եթէ ճիշտ է ընդունել որեւէ երկրի սահմանադրութիւն իբրեւ արդիւնք այդ երկրի մէջ տիրող հասարակական ուժերու փոխյարաբերութեան, ապա ուրեմն Թուրքիայի 1908ի սահմանադրութիւնը իր էութեամբ չէր եւ չէր կարող լինել դեմոկրատիկական բուրժուական իմաստով, որովհետեւ Թուրքիայի բուրժուազիան կը պատկանէր ոչ-թուրք ազգութիւնների, որոնք երկրորդական դեր էին կատարում քաղաքական ասպարէզում, իսկ թուրքերի մէջ այդ դասակարգը չափազանց թոյլ էր եւ չէր ներկայացնում իրանից հասարակական կշիռ ունեցող ոյժ:

Սահմանադրութեան առաջին տարին Իթիհատը եւրոպական սահմանադրութիւններից ազդուած դեմոկրատիզմի հովեր էր առնում, սակայն չէր կարող հաշուի չառնել այն հասարակական ուժերը, որոնց վրայ կը կրթներ, նա առաւ իր հետ եւ կղերական դասակարգը եւ դարձաւ տիպիկ, աւելի մոտերն ներկայացուցիչը համիսլամիզմի եւ պանթուրանիզմի: Թուրանական գաղափարը նոր թափ ստացաւ, հիմնուեցան պարբերաթերթեր՝ «Թիւրք Եուրդու» (Թուրքական աշխարհ – Հ.Ս.), «Թիւրք Օճաղը» եւ այլն, ուր թուրք շուլէն³⁴ մտատրականութիւնը կը բարձրացնէր օսմանցիի դրօշակին տեղ թուրանական դրօշակը՝ թրքական ալ պայրախը³⁵: Այլեւ չէր խօսուեր օսմանեան ցեղերու մասին, որոնց մէջ կը մտնէր նաեւ թուրք ցեղը, այլ կը խօսուէր բացէն, թէ Թուրքիան թուրքին է պատկանում:

Պանթուրանիզմի պրոպականտը աւելի եւս ուժեղացաւ համաշխարհային պատերազմի ընթացքին, երբ Գերմանիան յաղթական էր, երբ Ռուսաստանը քաղաքացիական կռիւների մէջ էր եւ կը համարուէր հասած մոմենտը իրականացնելու համար այս իդէալը:

Թուրք իրականութեան մէջ կար նաեւ մի ուրիշ կուսակցութիւն - Իթելաֆը³⁶, որ արտայայտիչն էր հին թուրքերի, այսինքն՝ թուրք կղերի, ֆեոդալների եւ Իթիհատէն դժգոհ մնացած մտատրականների: Հիմնուելով գրեթէ նոյն դասերի վրայ՝ այս ուժը պէտք էր տեղի տար Իթիհատին, որ աւելի կենսունակ էր եւ տիրապետող:

Սահմանադրութեան առաջին տարիներէն վերջ Իթելաֆը գրեթէ քաշուեցաւ հրապարակէն եւ կազմուեցաւ փարլամենտ գրեթէ զուտ իթիհատական:

Նպատակս լինելով այստեղ միայն թուրք ազգին մէջ գոյութիւն ունեցող քաղաքական հոսանքները վերլուծել, ես զանց եմ առնում վերլուծել Իթիհատի եւ փոքր ազգութիւնների փոխյարաբերութիւնները:

Դժբախտաբար թուրք ազգին մէջ սահմանադրութիւնից յետոյ ոչ միայն հրապարակ չեկաւ թուրք սոցիալիստ կուսակցութիւն, հակառակ անոր որ կար ուժեղ, տարերային բանուորական շարժում, այլ նոյնիսկ հրապարակ չեկաւ մի բուրժուական դեմոկրատիկ կուսակցութիւն: Թուրք գիւղացիութիւնը, ինչպէս առաջ, տառապում էր թուրք ֆեոդալիստների, պէկերի եւ աղաների ձեռքում, որոնք այս անգամ ամենաեռանդուն անդամներն էին Իթիհատի:

Տաճկաստանի Տնտեսական Պատկերը Եւ Բանուորական Շարժումը Սահմանադրական Շրջանին

Թուրքիան հողային սեփականութեան տեսակէտից կիսաֆեոդալական երկիր է: Հողերը մեծ մասամբ պէկերու, աղաներու սեփականութիւն են: Թուրք

գիտացիությունը ամենից զրկուած, տառապած դասակարգն է. մեծ մասամբ ճորտացած կամ սակաւահող: Թուրք գիտացին սահմանադրութիւնէն ոչ մի օգուտ չէր տեսել, որովհետեւ չէ ունեցել իր շահերին պաշտպան ոչ մէկ կուսակցութիւն: Մեծ քաղաքներուն մէջ է կենտրոնացած բուրժուազիան, որ այժմ զուտ թրքական քաղաքներու մէջ թրքական է, որովհետեւ պատերազմի ընթացքին քրիստոնէայ բուրժուազիան շատ տեղերէ վտարուած կամ ոչնչացուած է: Արդիւնաբերութիւնը Թուրքիայի մէջ քիչ է զարգացած:

Սահմանադրութեան շրջանին տարերայնօրէն յառաջ եկաւ ուժեղ բանուորական շարժում Պոլիս, Սալոնիկ, Իզմիր, Պրուսա եւ Ադանա քաղաքներուն մէջ:

Թուրք բանուորութիւնը, որ սենտիքաներու³⁷ մէջ կազմակերպուած էր խառն, տարբեր ցեղի պատկանող բանուորներու հետ, չունէր իր արտայայտիչը քաղաքական հողի վրայ: «Իշթիրակ» (համագործակցութիւն), «Մոսիալիս» անունով թերթեր կը հրատարակուէին սոցիալիզմին բոլորովին անձանօթ, բանուորութեան հետ ոչ մի կապ չունեցող մարդոցմէ, որոնք աւելի շուտ քաղաքական շանթաժի դեր կը խաղային ձեռք բերելու համար Իթիհատէն լաւ պաշտօններ:

Մուստաֆա Քեմալի Շարժումը

Այս շարժումը ունի միայն քաղաքական բնոյթ, երբեք՝ սոցիալական: Այն չափով, ինչ չափով նա կը պայքարի համաձայնական իմպերիալիզմի դէմ՝ թոյլ չտալու համար, որ զուտ թրքական հողամասեր պոկուին Տաճկաստանէն, այդ շարժումը ազգային ազատագրական է, իսկ այն չափով, ինչ չափով որ նա կ'ուզէ վերականգնել նախկին Թուրքիան, իրեն կցելու համար ոչ-թուրք հողամասեր, նա կը ներկայանայ մրցակից համաձայնական իմպերիալիզմին: Եթէ ազգային տեսակէտով այդ շարժումը ազատագրական է, սոցիալական տեսակէտով նա յետադիմական է, որովհետեւ անոր գլուխ անցած դեկավարները կը պատկանին գիտացիութիւնը ճնշող պէկերու եւ աղաներու, կիսաֆեոդալներու դասակարգին: Արտաքին կոմունիստական ձեւերը ոչնչով չեն կարող փոխել դասակարգային էութիւնը ղեկավարողներու, որոնք ճարպիկ կերպով Պոլսոյ կառավարութեան հետ համախորհուրդ իրենց մղած կռուին հետ զուգընթաց կը բանակցին նաեւ համաձայնական քափիթայիստ պետութիւններու հետ՝ սարքելու համար քոմպիւնացիաներ³⁸ աւելի ձեռնտու պայմաններով վերականգնելու նպատակով պատերազմէն պարտուած Թուրքիան:

Անգլիան, որուն շահերը ամենէն աւելի վտանգուած են Արեւելքում, մանաւանդ Վրանգէլի³⁹ ջախջախումէն վերջ, պիտի աշխատի ամեն կերպ թոյլ չտալ, որ Սովետական Ռուսաստանը օգտագործէ այդ շարժումը այժմ աւելի ուժգին կերպով իր դէմ:

Մուստաֆա Քեմալը իր սոցիալական դիմագծով լինելով կասկածելի ոյժ, որ կարող է անցնել իմպերիալիզմի կողմը, հենց որ սակարկութիւնը աւելի յաջող դուրս գայ եւ կարենոր քոմպետիաներ⁴⁰ ձեռք բերէ⁴¹, միակ ապահով միջոցը Թուրքիոյ տառապող աշխատաւոր գիտացիութիւնը իրապէս սոցիալական⁴² յեղափոխութեան կողմը գրաւելու համար Թուրքիայի սովետիզացիան է՝ բոլորովին անջատ եւ անկախ Քեմալէն:

Բնական է, թե որքան երկար ատեն որ հնարատր է, ձեռնտու է քեմալական շարժումը ձեռքից բաց չը թողնել՝ ժամանակ շահելու եւ պրոպագանդատա-յի համար ատելի ձեռնտու միջոցներ ձեռք բերելու համար:

Ինչպէս Ենթարկել Թուրքիան Սովետիզացիայի

Թուրքիոյ մէջ բանուորագիւղացիական յեղափոխութիւն յառաջ բերելը ամենադժուարին գործն է: Թուրք աշխատաւորութիւնը չէ ունեցած, ինչպէս վերեւ յիշեցի, իր հարազատ կուսակցութիւնը, նա սոցիալիստական պրոպագանդա չէ տեսել: Թուրք մտաւորականութեան մէջ հազիւ գտնուին մատի վրայ համբողջ իդիալիստներ, որոնք երբեք անցեալում կեանքի մէջ չեն արտայայտուած: Իբրեւ պրոպագանդիստ գուցէ շատ ատելի վստահելի են ազրբէյջանցի եւ ռուսաստանցի թուրք մտաւորականները, որոնք երկար տարիներ ապրած կը լինեն ռուսական յեղափոխական մթնոլորտում եւ հմտութիւն ու փորձառութիւն ձեռք բերած կը լինեն: Ահա այդ ուժերն է, որ մոքիլիզացիայի պիտի ենթարկել եւ անոնց միջոցաւ յառաջ բերել գաղտնի կազմակերպութիւններ Թուրքիայի նահանգային կենտրոններում, որտեղից եւ ճիւղեր տարածել ատելի ներքերը: Շարժումը պէտք է ունենայ երեք գլխաւոր կենտրոն - Կ. Պոլիսը, Անգորան եւ Էրզրումը: Պոլսոյ ճանապարհով կարելի է կապ պահել Անգորայի հետ, իսկ Կարսի ճանապարհով՝ Էրզրումի հետ: Թուրքիայի պայմաններուն, գիւղացիին եւ բանուորին ցաւերուն լաւ ծանօթ մարդիկ պէտք է խմբագրեն շատ հասկանալի պարզ թուրքական լեզուով պրոչիւրներ, պարբերական մամուլ եւ գաղտնի ճանապարհով տարածեն թուրք աշխատաւորութեան մէջ: Այդ հրատարակութիւնների եւ Թուրքիոյ մէջ յառաջ բերուելիք գաղտնի կազմակերպութիւնների ընդհանուր ղեկավարութիւնը պէտք է լինի Հայաստանի մէջ եւ պէտք է դրուի Արտաքին Գործերի Կոմիսարիատի Արեւելեան Քաղաքականութեան Բաժնի վրայ, որ պիտի գործէ Մոսկուայի եւ Բագուի հետ համախորհուրդ: Արեւելքի Բաժինը պահելով կենդանի կապ այդ շարժման հետ, կը պատրաստի պարբերական քաղաքական զեկուցումներ գործերու ընթացքի մասին Արտաքին Գործերի Կոմիսարին:

Արեւելքի Բաժինը կապ կը պահէ նոյնպէս ի հարկին Պարսկաստանի եւ առհասարակ արեւելեան ազգերի շարժման հետ՝ ունենալով իր գործունէութեան իբրեւ ծանօթութեան կենտրոն Թուրքիան:

Գործունէութեան մանրամասն ծրագիր կազմելու, աշխատանքի բաժանման եւ իրաւասութեան ճշտման համար գուցէ կարեւոր համարուի Մոսկուայի, Բագուի եւ Երեւանի համապատասխան ձեռնահաս ներկայացուցիչների մի կոնֆերանս գումարել:

Խորհրդային Հայաստանի Արտաքին Գործերի Կոմիսարիատի Արեւելքի Բաժնի ներքին կազմակերպութիւնը, տեխնիկական ձեւն ու ծաւալը կախուած է այն իրաւասութիւններից, որ պիտի նա ունենայ եւ այն աշխատանքներից, որոնք պիտի դրուեն նրա վրայ:

Արտասահմանեան Գաղութներ Եւ Նրանց Հետ Կապ Պահելու Մասին

Առանձին զեկուցումով⁴³ եւ պարզած են արտասահմանեան հայ գաղութների քաղաքական մտայնութիւնը եւ ցոյց են տուած, թէ ինչ միջոցներ ձեռք պէտք է առնել հակագղելու համար այն բոլոր քաղաքական եւ դիւանագիտական խաղերին, որոնց զոհ կարող են դառնալ այդ գաղութները:

Ուրեմն՝ գաղութները պետք է օգտագործել երկու կերպ.

ա) Քաղաքական տեսակետից

բ) Նյութական օժանդակություններ ձեռք բերելու տեսակետից:

Այս երկու նպատակներին հասնելու համար պետք է աշխատել ունենալ գաղտնի կերպով գործող եւ Խորհրդային Հայաստանի հետ կապ պահող ներկայացուցիչներ զանազան գաղութներում, որոնց պարտականությունը պիտի լինի. ա) Հնարարություն սահմաններում զեկուցումներ ուղարկել Հայաստան, բ) Այստեղից Հայաստանի մասին պարբերաբար ուղարկուած տեղեկությունները ժողովրդական լայն մասսաների մէջ տարածել աշխատել, գ) Մղում տալ արտասահմանում գործող զանազան նպաստի մարմիններին, որ շարունակեն իրենց առաքումները Հայաստանի որբերին, գաղթականներին:

Աւելի լայն չափով գաղութային գործունեությունը բնական է, քէ առաջմ հնարարու չէ, որովհետեւ Խորհրդային Հայաստանը ճանաչուած չէ եւ չի կարող ունենալ իր պաշտօնական ներկայացուցիչները:

Վերեւ յիշուած գաղտնի կերպով գործող ներկայացուցիչները նշանակելու եւ գործը կազմակերպելու համար շատ օգտակար կը լինի խիստ վստահելի մէկը ուղարկել գոնէ մինչեւ Պոլիս:

Մ. Պետրոսեան

Յաւելուած.- Հայաստանի սահմանների մէջ ապրող տաճկահայ աշխատատրութեանը Խորհրդային Հայաստանին կապելու համար անհրաժեշտ է ստեղծել յատուկ մարմին, որ պետք է գործէ Արտ[աքին] Գ[ործերի] Կոմիտեի հսկողութեան տակ այն չափով, ինչ չափով որ այդ մարմինը պիտի օգտագործուի քաղաքական նպատակով:

3.⁴⁴

[1921թ. Յունուար]⁴⁵

ՆԱԽԱԳԻԾ

Խ. ՀԱՀԱՅՍՏԱՆԻ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ԿՈՄԻՏԱՐԻԱՏԻ
ԻՆՖՈՐՄԱՑԻՈՆ ԲԱԺՆԻ ՆԵՐՔԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԵԱՆ

Ինֆորմասիոն բաժին

ա) Ենթաբաժին ընդհանուր ինֆորմացիայի

բ) “ Արեւելեան երկրների

գ) “ արտասահմանեան հայ գաղութների

ա) Ընդհանուր ինֆորմացիայի ենթաբաժնի պարտականությունները.

Պատրաստել տոսիւներ⁴⁶ տեղական եւ արտասահմանեան մամուլի կարօններէ (virezki⁴⁷) ներքին, արտաքին եւ միջազգային քաղաքականութեան հարցերու շուրջ: Այս նիւթերուն հիման վրայ ընել վերլուծումներ եւ պատրաստել թեզիւմներ (խտացում) ու թարգմանություններ:

Պատրաստել թեզիւմներ եւ վերլուծումներ Խ[որհրդային] Հայաստանի արտասահմանեան ներկայացուցիչների եւ արտասահմանեան քաղաքական թղթակիցների կողմից ստացուած զեկուցումների:

Բաշխում վերլուծումների եւ թեզիւմների Արտ[աքին] Գ[ործերի] Կոմիտեի ներքին բաժիններին եւ արտասահմանեան ներկայացուցիչներին:

Պատրաստել եւ ուղարկել ինֆորմացիա Խ[որհրդային] Հայաստանի ընթացիկ քաղաքականութեան շուրջ Հայաստանի արտասահմանեան ներկայացուցիչներին:

բ) Արեւելեան երկրների ենթաբաժնի պարտականութիւնները.

Թղթակցութիւն Խորհրդային Ռուսաստանի եւ Խ[որհրդային] Ատրպէյճանի համանման բաժինների հետ, ինֆորմացիայի փոխանակում, թղթակցութիւն Արեւելեան երկրների հետ, մասնատրաբար Թուրքիայի, Պարսկաստանի եւ Վրաստանի սեփական թղթակիցների կամ ներկայացուցիչների հետ, բանուորական եւ ազգային շարժումների եւ այդ երկրներում կատարուող քաղաքական փոփոխութիւնների մասին:

Հետեւել Արեւելեան քաղաքականութեան շուրջ լոյս տեսած գրականութեան եւ մամուլին, կազմել տեսութիւններ Ասիական երկրների, մասնատրաբար Թուրքիայի, Պարսկաստանի եւ Վրաստանի շարժումների մասին:

Համաձայն խորհրդային երկրների Արեւելեան քաղաքականութեան համար գծուած ուղղութեան՝ պարբերաբար հրահանգներ տալ եւ սերտ կապ պահել այդ քաղաքականութիւնը կազմակերպչական տեսակէտով իրականացնող համապատասխան օրկանների հետ:

գ) Արտասահմանեան հայ գաղութների ենթաբաժնի պարտականութիւնները

Կենդանի կապ հաստատել արտասահմանեան հայ գաղութների հետ՝ տալով գաղութի հայ մամուլին պարբերաբար ինֆորմացիա Խ[որհրդային] Հայաստանի ներքին եւ արտաքին քաղաքականութեան մասին:

Վերլուծումներ եւ ընդհանրացումներ պատրաստել գաղութների քաղաքական թղթակիցներից ստացուած տեղեկութիւններից հայ գաղութների ծոցում ստեղծուած շարժումների ու քաղաքական հոսանքների մասին:

Մղում տալ արտասահմանի մէջ գործող զանազան նպաստի մարմիններին, որ շարունակեն իրենց առաքումները Հայաստանի գաղթականներին եւ որբերին:

Ուսումնասիրել Խորհրդային Ռուսաստանի եւ Ատրպէյճանի զանազան շրջաններում ցրուած հայ գաղութների դրութիւնը, կազմել վիճակագրութիւններ, գարկ տալ ստեղծելու համապատասխան մարմիններ, նրանց օգնութեան հասնելու եւ նրանց ի հարկին դէպի Խ[որհրդային] Հայաստան ներգաղթը ղեկավարելու համար Խ[որհրդային] Հայաստանի հիւպատոսների հսկողութեան տակ:

Կապ պահել արտասահմանի եւ Խ[որհրդային] Հայաստանի ներգաղթի համապատասխան օրկանների հետ եւ այս վերջինին հետ համախորհուրդ տալ հրահանգներ հիւպատոսների միջոցաւ ներգաղթի ձեւի եւ մեթոսների մասին:

Այս նախագիծը իրականացնել կարենալու համար անհրաժեշտ է.

ա) Կանոնաւոր կերպով ձեռք բերել արտասահմանեան թերթեր եւ պարբերականներ, ինչպէս նաեւ արեւելեան երկրների շարժումների արտայայտիչ եղող մամուլ:

բ) Ձեռք բերել արեւելեան երկրների շուրջ մինչեւ այսօր լոյս տեսած գրականութիւնը:

զ) Խորհրդային] Ռուսաստանի եւ Ատրպեյճանի զանազան հայաշատ վայրերում, ինչպէս նաեւ Պարսկաստանի զանազան կենտրոններում եթէ հնարատր է նշանակել հիւպատոսներ, որոնց վրայ հիւպատոսական բաժնի կողմէ դրուած պարտականութիւններէ զատ դնել նաեւ քաղաքական թղթակցութեան⁴⁸ եւ գաղութային գործերի պարտականութիւններ:

դ) Խորհրդային Ռուսաստանի համաձայնութեամբ եւ հրահանգներով կազմել Տաճկաստանի եւ Պարսկաստանի մէջ բանուորա-գիւղացիական կազմակերպութիւններ ստեղծող պիւրօ, որուն հետ կենդանի կապ պահել:

ե) Նշանակել քաղաքական թղթակիցներ Պոլիս, Անգորա, Ատանա, Էրզրում, Տրապիզոն, Աթենք, Իզմիր, Թեհրան, Թարիզ, արտասահմանեան գաղութներ:

Ծանօթագրութիւն].- Պոլիս գլխաւոր կեդրոնն է այժմ Արեւելքի քաղաքակա-նութեան, այնտեղ են համաձայնական պետութիւնների Haut-Commissaire⁴⁹ները, ուստի հեռագրական, համաձայնականների անթելների, Haut-Commissariat⁵⁰ներում, համաձայնական գաղտնի ոստիկանութեան մէջ կան հայ թարգմաններ, ծառայողներ, որոնց կարելի է օգտագործել թէ՛ ռազմական եւ թէ՛ քաղաքական ճշգրիտ եւ լայն ինֆորմացիայի համար: Պոլսոյ քաղաքական թղթակիցը պէտք է լինի լայն պատրաստութիւն ունեցող անձնատրութիւն, որովհետեւ նրա վրայ պիտի դրուեն շատ պատասխանատու պարտականութիւններ. նա պիտի նշանակէ Ատանայի, Իզմիրի, Աթենքի եւ արտասահմանեան հայ գաղութների թղթակիցները, կապ պիտի հաստատէ Անկարայի, Էրզրումի եւ Տրապիզոնի թղթակիցների հետ (այս վերջինները աւելի յարմար է շատ վստահելի թաթար քոմունիստներից նշանակել): Նա պիտի ձեռք բերէ եւ ուղարկէ արտասահմանեան մամուլը, պիտի պատրաստէ զեկուցումներ ընդհանրապէս քաղաքական, մասնաւորաբար Տաճկաստանի ներքին շարժումների եւ արտաքին քաղաքականութեան մասին, հայ գաղութների ծոցում ստեղծուած հոսանքների եւ շարժումների մասին, նա պիտի վերարտադրէ եւ բաշխէ արտասահմանեան հայ մամուլին Հայաստանից ուղարկուած ինֆորմացիաները: Նա Խորհրդային Հայաստանի համակրող թերթերում իր կեղծ ստորագրութեամբ գրած յօդուածներով պիտի հակազդէ քննադատութիւններին, նա պիտի կապ պահէ Տաճկաստանի բանուորական շարժումը ղեկավարող մարմինների հետ եւ Խ[որհրդային] Հայաստանից ստացած հրահանգները նրանց հաղորդէ: Անգորայի, Ատանայի, Աթենքի, Իզմիրի, Էրզրումի, Տրապիզոնի եւ արտասահմանի թղթակիցները պիտի լինեն նրան ենթարկուած, նա պիտի ունենայ իր օգնականները:

Թեհրան եւ Թարիզ նման պարտականութիւններ կարող են դրուել քոմ-սիւլների⁵¹ վրայ. հակառակ դէպքում քաղաքական թղթակիցների վրայ: Պոլսից յարաբերութիւն կարելի է պահել քանի դեռ Վրաստանը սովեթիզացիայի ենթարկուած չէ Պաթումի ճանապարհով, իսկ Վրաստանը սովեթիզացիայի ենթարկելուց յետոյ՝ Թարիզի ճանապարհով:

Զեկուցումները Հայաստանից Պոլիս եւ Պոլսից Հայաստան կ'ուղարկուեն ծածկագրով նամակներու եւ գրքերու մէջ: Շտապ կարգով հաղորդուելիք տեղեկութիւնները՝ հեռագրով Պոլսից Թարիզ մասնաւոր կերպով կազմուած քուտեքսով:

Թղթակցութիւններ յանձնարարուած եւ մամուլ կարող են ստացուել Պոլսից Թարիզ եւ Թարիզից Պոլիս 15 օրուան մէջ:

Անմիջականօրէն անհրաժեշտ է առաջին հերթին ստեղծել օրկաններ Պոլիս եւ Թարիզ:

Արտ. Գործ. Կոմիսարիատի Ինֆորմասիոն Ու Արեւելեան Բաժնի Վարիչ Մ. Պետրոսեան

ԾԱՆՕԹԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

- ¹ Տե՛ս՝ Հայաստանի Ազգային Արխիւ (ՀԱԱ), ֆ. 199, ց. 1, գ. 118, մաս 2, ք. 196, ֆ. 114, ց. 1, գ. 30, ք. 2:
- ² Տե՛ս՝ Հ. Սուքիասեան, «ՀՀ Արտգործնախարարութեան Եւ ՀՄԽՀ Արտգործողութեան Ժառանգութեան Հարցի Շուրջ», *Երեւանի Պետական Համալսարանի Պատմութեան Ֆակուլտետ. Տարեգիրք Բ (Պատմագիտական Հանդէս)*, Երեւան, ԵՊՀ Հրատ., 2010, էջ 223:
- ³ Մովսէս Պետրոսեանը մասնագիտութեամբ իրաւաբան էր, անդամ՝ Հայ Յեղափոխական Դաշնակցութեան (ներկայացնում էր ՀՅԴ Բաղկանների Կենտրոնական Կոմիտէն): 1919ին նա ժամանել էր Հայաստան՝ մասնակցելու ՀՅԴ Թ. Համագումարին, իսկ 1920 Սեպտեմբերի 1ին աշխատանքի անցել ՀՀ Արտգործնախարարութիւնում՝ որպէս Արտաքին Գործերի Նախարար Համագասպ Օհանջանեանի օգնական (տեղակալ): Հայաստանի խորհրդայնացմանը յաջորդող օրերին՝ 1920 Դեկտեմբերի 3-10ին, նա կատարում էր ՀՄԽՀ Արտաքին Գործերի Նախարարութեան ժամանակաւոր վարիչի պարտականութիւնները: ՀՄԽՀ Արտաքին Գործերի Ժողովմատի կազմաւորումից եւ Ալեքսանդր Բէկզադեանի՝ Ժողկոմ նշանակուելուց յետոյ Պետրոսեանն առժամանակ փաստացի Ժողկոմի օգնականի գործառնութիւններ էր իրականացնում (Հ. Սուքիասեան, «ՀՄԽՀ Արտաքին Գործերի Ժողովրդական Կոմիսարիատի Կազմաւորման Պատմութիւնից», *Բանբեր Երեւանի Համալսարանի, Հասարակական Գիտութիւններ. Միջազգային Յարաբերութիւններ, Քաղաքագիտութիւն*, 2010, քիւ 130.6, էջ 54-60):
- ⁴ Տե՛ս՝ ՀԱԱ, ֆ. 114, ց. 1, գ. 16, ք. 34 եւ շրջ., 1 շրջ., 1, 2 եւ շրջ.:
- ⁵ Տե՛ս՝ ՀԱԱ, ֆ. 114, ց. 1, գ. 11, ք. 59-61 շրջ.:
- ⁶ Տե՛ս՝ ՀԱԱ, ֆ. 114, ց. 1, գ. 40, ք. 5:
- ⁷ Տե՛ս՝ Հ. Սուքիասեան, «ՀՄԽՀ Արտգործողութեան Տեղեկատու Բաժնի Գործունէութիւնը (1921-1922 թթ.)», *Հայոց Պատմութեան Հարցեր. Գիտական Յօդուածների Ժողովածու, քիւ 11*, Երեւան, ՀՀ ԳԱԱ Պատմութեան Ինստիտուտի Հրատ., 2010, էջ 295-298:
- ⁸ Տե՛ս՝ ՀԱԱ, ֆ. 114, ց. 2, գ. 91, ք. 3-6 շրջ.:
- ⁹ ՀԱԱ, ֆ. 114, ց. 1, գ. 14, ք. 1-3 շրջ.։ Բնագիր: Ինքնագիր: Փաստաթղթի հայերէն մեքենագիր բնագիրը տե՛ս՝ ՀԱԱ, ֆ. 114, ց. 1, գ. 16, ք. 34 եւ շրջ., 1 շրջ., 1, 2 եւ շրջ.:
- ¹⁰ Վուրթո Վիլսոն (1856-1924)՝ ԱՄՆ 38րդ նախագահը (1913-1921)՝ Դեմոկրատական Կուսակցութիւնից: Ուներ հայասերի համարում:
- ¹¹ Պօղոս Նուբար փաշա (1851-1930)՝ եգիպտահայ հասարակական-քաղաքական գործիչ: 1906ին իր գլխավորութեամբ հիմնուել է Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութիւնը: 1912ին Գէորգ Ե. Կաթողիկոսի կողմից նշանակուել է Հայ Ազգային Պատուիրակութեան նախագահ:
- ¹² Աւետիս Ահարոնեան (1866-1948)՝ գրող, հասարակական-քաղաքական գործիչ, ՀՅԴ անդամ: 1919-1920 եղել է Փարիզի Հաշտութեան Խորհրդաժողովում ՀՀ պատուիրակութեան նախագահը:
- ¹³ Հովանաւորութեան իրաւունք:
- ¹⁴ Նկատի ունի 1920 Օգոստոսի 2ին, 3ին եւ 4ին համապատասխանաբար դաշնակցականների, ռամկավարների եւ հնչակեանների նախաձեռնութեամբ Կիլիկիան անկախ հռչակելու վերաբերեալ կատարուած յայտարարութիւնները (Ռ. Հ. Գաս-

- պարեան, *Հայկական Կոտորածները Կիլիկիայում (XIX Դարի 90ական թթ.-1921թ.)*, Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտութիւն» Հրատ., 2005, էջ 160-161):
- ¹⁵ Հնարքներին:
- ¹⁶ Այն տեղի է ունեցել 1920 Մայիսի 5ից Յուլիս 13ը: ԱՄՆից ընտրուած պատգամատրոները եւ Բուլղարահայերի Ազգային Խորհուրդը հրաժարուեցին մասնակցել համագումարին՝ համարելով, որ արեւմտահայութեան հարցով պէտք է զբաղուի ՀՀ կառավարութիւնը: Հենց այս հանգամանքը նկատի ունի Մ. Պետրոսեանը:
- ¹⁷ Անտանտի յաղթական տէրութիւնների (ԱՄՆ, Մեծն Բրիտանիա, Ֆրանսիա, Իտալիա եւ Գապոնիա) կողմից Հայաստանի Հանրապետութեան փաստացի ճանաչումը տեղի է ունեցել 1920 Յունուարի 19ին: Յունուարի 23ին Մեծն Բրիտանիայի Արտաքին Գործերի Նախարար Ջորջ Բրըզընն այդ մասին հեռագրով տեղեկացրել է ՀՀ կառավարութեանը: Փետրուարի 6ին ՀՀ վարչապետ Ա. Խատիսեանը Փարիզ՝ ՀՀ պատուիրակութեան նախագահ Ա. Ահարոնեանին հասցէագրած նամակում այս առնչութեամբ կարծիք էր յայտնում, թէ. *«Նոյնիակ մեր անկախութեան ճանաչումը Փարիզի Գերագոյն Խորհրդի կողմից մեզ թւում է նրանց կողմից իբրեւ մի միջոց բոլշևիզմի դէմ կռուելու համար»* (Ա. Խատիսեան, *Հայաստանի Հանրապետութեան ծագումն Ու Ջարգացումը*, Պէյրոս, Տպ. Համազգային, 1968, էջ 199):
- ¹⁸ Խօսքը 1920 Օգոստոսի 10ին Թիֆլիսում ստորագրուած հայ-ռուսական համաձայնագրի մասին է, որի համաձայն ռուսական զօրքերը ժամանակատրուապէս ռազմակալում էին Հայաստանի եւ Ադրբեջանի միջեւ վիճելի համարուող Ղարաբաղը, Զանգեզուրն ու Նախիջեանը:
- ¹⁹ Նկատի ունի 1920 Մայիսին հայ բոլշևիկների բարձրացրած ապստամբութիւնը, որը ՀՀ Բիւրօ-կառավարութեան կողմից ճնշուեց:
- ²⁰ Բռնագրաման:
- ²¹ Թերթի հրատարակութիւնը միայն ժամանակատրուապէս է դադարեցուցել:
- ²² Նկատի ունի 1917 Դեկտեմբերի 31ին Վլադիմիր Լենինի ղեկավարած Խորհրդային Ռուսաստանի Ժողովրդական Կոմիսարների Խորհրդի կողմից ընդունուած «Թուրքահայաստանի Մասին» որոշումը, որով թղթի վրայ ճանաչում էր արեւմտահայերի ազատ ինքնորոշման իրաւունքը՝ *«ընդհուպ մինչեւ լիակատար անկախութիւն»*:
- ²³ Պահեստային ոյժ:
- ²⁴ Ժամանակավրէպ:
- ²⁵ Արտատարածքային:
- ²⁶ Դրամանիշով:
- ²⁷ Առարկան:
- ²⁸ ՀԱԱ, ֆ. 114, ց. 1, գ. 16, թ. 3-6: Բնագիր: Մեքենագիր (յատելուածը ձեռագրով է): Փաստաթղթի ռուսերէն վաւերացուած պատճենը տես՝ ՀԱԱ, ֆ. 114, ց. 1, գ. 11, թ. 59-61 շրջ.:
- ²⁹ Առաջապահի:
- ³⁰ Մերձատրոների շրջապատը:
- ³¹ Երիտասարդ թուրքերի *Իթթիհատ Վէ Թերաքքի* Կուսակցութիւնը:
- ³² Զաղաք Գերմանիայում:
- ³³ Ռազմական յեղաշրջման մասին է, որի հետեւանքով իշխանութեան գլուխ անցան Երիտասարդ Թուրքերը:
- ³⁴ Ազգայնամուլ:
- ³⁵ Կարմիր դրօշը:
- ³⁶ Երիտասարդ Թուրքերին ընդդիմադիր *Հիրիէթ Վէ Իթիլաֆ* Կուսակցութիւնը:
- ³⁷ Արհեստակցական միութիւններ:
- ³⁸ Հնարքներ:

- ³⁹ Պիոտր Վրանգել (1878-1928)՝ ցարական բանակի զորավար: 1917 Հոկտեմբերին տեղի ունեցած բոլշևիկեան յեղափոխութիւնից յետոյ Ռուսաստանի հարաւում ծաւալուած հակաբոլշևիկեան շարժման ղեկավարներից:
- ⁴⁰ Շահագործման իրաւունք:
- ⁴¹ Այս տեսակէտը լայն տարածում էր գտել ՀՍԽՀ ղեկավարութեան շրջանում, ինչի պատճառով նրանք այս զեկուցագիրը Մոսկուա ուղարկեցին:
- ⁴² Բնագրում այդպէս է, պէտք է լինի՝ «սոցիալիստական»:
- ⁴³ Տե՛ս՝ նախորդ փաստաթուղթը:
- ⁴⁴ ՀԱԱ, ֆ. 114, ց. 2, գ. 40, ք. 51-52 շրջ., 55: Բնագիր: Ինքնագիր: Փաստաթղթի հայերէն մեքենագիր պատճենը տե՛ս՝ ՀԱԱ, ֆ. 1022, ց. 3, գ. 317, ք. 1-2 շրջ.:
- ⁴⁵ Թուագրում է համաձայն բովանդակութեան:
- ⁴⁶ Թղթածրարներ:
- ⁴⁷ Այս բառը գրուած է ռուսերէն:
- ⁴⁸ 1922 Յուլիսի 3ին ՀՍԽՀ Արագործժողովոմատի լուծարումից յետոյ մնան թրքակիցների ինստիտուտ ստեղծելու փորձ կատարուեց:
- ⁴⁹ Գերագոյն կոմիսար:
- ⁵⁰ Գերագոյն կոմիսարիատ:
- ⁵¹ Հիւպատոսների:

SOVIET ARMENIAN POLICY ISSUES CONCERNING THE ARMENIAN
COMMUNITIES OF THE MIDDLE EAST (1920-1921)
(Summary)

HAMO K. SUKIASYAN

In 1918-1920 refugees in Armenia and relations with Armenian communities of the Middle East and distant states were put on the agendas of both the Republic of Armenia and Soviet Armenia.

The author discloses three hitherto unpublished documents written by ex-deputy Minister of Foreign Affairs Movses Petrosyan between December 1920 and January 1921. The documents were prepared for the Soviet Armenian government. In these documents Petrosyan briefs the government on the Armenian communities, their organizations and their stance vis-a-vis the Armenian cause. Petrosyan suggests areas in which Soviet Armenia may play a key role within the Soviet republics. In the third document Petrosyan drafts a Charter for a forthcoming Information Department of the People's Commissariat of Foreign Affairs. It has three sections: General Information, Oriental Countries, Armenian Diaspora Communities.

Petrosyan hints that the communities could be beneficial for Soviet Armenia on both political and economic grounds.